ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

9 նոյեմբերի 2011 թ. թիվ 11/1673/

28. ՀՀ ԳԱԱ էթիկայի հանձնաժողովի կանոնակարգի մասին

ՀՀ ԳԱԱ Նախագահությունը որոշեց.

ա/ հաստատել ՀՀ ԳԱԱ էթիկայի հանձնաժողովի կանոնակարգը /կանոնակարգը կցվում է/,

բ/ հաստատել ՀՀ ԳԱԱ էթիկայի հանձնաժողովի հետևյալ կազմը. ակադեմիկոսներ Վ.Բ.Բարխուդարյան /նախագահ/, Կ.Գ.Ադամյան, թղթակից անդամներ Ռ.Մ.Հարությունյան, Հ.Վ.Հովհաննիսյան, Գ.Ս.Ղազինյան:

ՀՀ ԳԱԱ ՆԱԽԱԳԱՀ Ռ.Մ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ-ՔԱՐՏՈՒՂԱՐ Հ.Հ.ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Հաստատված է ՀՀ ԳԱԱ

նախագահության 2011 թ. նոյեմբերի 9-ի

թիվ 11/1673/-28 որոշմամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ընդհանուր դրույթներ
2. Էթիկայի հանձնաժողովի գործունեության նպատակը և խնդիրները
3. Էթիկայի հանձնաժողովի գործառույթները
4. Էթիկայի հանձնաժողովի լիազորությունները
5. Էթիկայի հանձնաժողովի կազմավորման հիմքերը և կարգը
6. Էթիկայի հանձնաժողովի անդամների իրավունքները և պարտականությունները
7. Էթիկայի հանձնաժողովի գործունեության կարգը
8. Էթիկայի հանձնաժողովի գործունեության ապահովումը
9. Եզրափակիչ դրույթներ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի էթիկայի հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) ստեղծվել է ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի կանոնադրության 58-րդ կետի պահանջներին համապատասխան՝ «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի (ընդունվել է 2011թ. ապրիլի 14-ին, ՀՕ-135, այսուհետ՝ Օրենք) և ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի կանոնադրության (ընդունվել է 2011թ. մայիսի 26-ին, հ. 815, այսուհետ՝ Կանոնադրություն) դրույթների կատարման վերահսկողությունն իրականացնելու նպատակով:

1.2.Հանձնաժողովը համարվում է ՀՀ ԳԱԱ նախագահին կից մշտապես գործող կոլեգիալ խորհրդակցական մարմին:

1.3. Հանձնաժողովի որոշումները ենթակա են կատարման ՀՀ ԳԱԱ նախագահի հաստատումից հետո:

2. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1. Հանձնաժողովի գործունեության հիմնական նպատակն է Օրենքի և Կանոնադրության բոլոր դրույթների պահպանման ապահովումը, ինչպես նաև Ակադեմիայի անդամների վարքագծի բարոյական գնահատական տալը.

2.2. Հանձնաժողովի հիմնական խնդիրներն են.

- Ակադեմիայի համակարգում բարոյական վարքագծի միասնական նորմերի ձևավորումը,

- Ակադեմիայի անդամների վարքագծի բարոյական գնահատականների չափորոշիչների ձևավորումը,

- բարոյական կոնֆլիկտների կանխարգելումը և լուծումը:

3. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

Հանձնաժողովի գործառույթներն են՝

- Ակադեմիայի համակարգում Օրենքի և Կանոնադրության կիրարկման համար հանձնարարականների նախապատրաստումը,

- Օրենքի և Կանոնադրության դրույթների խախտումներ հայտնաբերելու դեպքում միջոցներ ձեռնարկելու առաջարկությունների նախապատրաստումը,

- Ակադեմիայի գործունեության տարբեր ոլորտներում բարոյական կոնֆլիկտների լուծմանն օժանդակումը,

- Օրենքը և Կանոնադրությունը սահմանված կարգով բարեփոխելու առաջարկությունների նախապատրաստումը:

4. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հանձնաժողովն իր իրավասության շրջանակներում ունի հետևյալ լիազորությունները.

- հանձնարարականներ նախապատրաստել Օրենքի և Կանոնադրության դրույթների կիրարկման համար,

- իրագործել ընդհանուր վերահսկողություն Օրենքի և Կանոնադրության դրույթների պահպանման համար,

- բարոյական գնահատական տալ Ակադեմիայի անդամների վարքագծին

- որոշումներ նախապատրաստել և ներկայացնել Ակադեմիայի նախագահի հաստատմանը՝ բարոյական կոնֆլիկտների կանխարգելման և լուծման հարցերով,

- առաջարկություններ ներկայացնել՝ Ակադեմիայի նախագահության նիստերին քննարկելու համար:

5. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ԵՎ ԿԱՐԳԸ

5.1. Հանձնաժողովի անդամների թիվը պետք է լինի 5-ից ոչ պակաս և 7-ից ոչ ավելի:

5.2. Հանձնաժողովի անդամներ նշանակելիս հաշվի են առնվում թեկնածուների բարոյական հատկանիշները, նրանց մասնագիտական ձեռքբերումները, հեղինակությունը, հասարակական գործունեությունը:

5.3. Հանձնաժողովի անդամների թեկնածություններն առաջադրվում են Ակադեմիայի նախագահության կողմից: Ակադեմիայի նախագահը Հանձնաժողովի անձնակազմին, Հանձնաժողովի նախագահին և պատասխանատու քարտուղարին հաստատում է եռամյա ժամկետով:

5.4. Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամի լիազորությունները կարող են դադարեցվել Ակադեմիայի նախագահի որոշման հիման վրա:

6. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

6.1. Հանձնաժողովի անդամներն իրավունք ունեն.

- գրավոր առաջարկություններ ներկայացնելու Հանձնաժողովի աշխատանքային պլանը կազմելիս,

- Հանձնաժողովի քննարկմանը ներկայացնելու Հանձնաժողովի խնդիրների կատարումն ու գործառույթների իրականացումն ապահովող հարցեր,

- անհրաժեշտության դեպքում պահանջելու Հանձնաժողովի արտահերթ նիստի գումարում:

6.2. Հանձնաժողովի անդամները պարտավոր են՝

- անձնական մասնակցություն ունենալ Հանձնաժողովի աշխատանքներին,

- ծանոթանալ Հանձնաժողովի նիստի նյութերին և ունենալ սեփական դիրքորոշում նիստի օրակարգի յուրաքանչյուր հարցի վերաբերյալ,

- իրավունքների իրագործման և պարտականությունների կատարման ժամանակ գործել Ակադեմիայի Օրենքի և Կանոնադրության դրույթներին համապատասխան:

6.3. Հանձնաժողովի նախագահի պարտականություններն են՝

- Հանձնաժողովի գործունեության պլանավորում և կազմակերպում, Հանձնաժողովի նիստերի վարում

- հաշվետու լինել Ակադեմիայի նախագահին և տեղեկատվություն տրամադրել ՀՀ ԳԱԱ նախագահությանը Հանձնաժողովի աշխատանքի մասին:

6.4. Հանձնաժողովի պատասխանատու քարտուղարի պարտականություններն են՝

- Հանձնաժողովի նիստերի գումարում,

- Հանձնաժողովի նիստերի նյութերի նախապատրաստում,

- գործավարության կազմակերպում, և արձանագրությունների պահպանում:

7. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

7.1. Հանձնաժողովի նիստերն անցկացնում է Հանձնաժողովի նախագահը:

7.2. Հանձնաժողովի աշխատանքները կազմակերպվում են ըստ եռամսյա պլանի:

7.3. Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են ներկաների ձայների պարզ մեծամասնությամբ, սակայն ոչ պակաս Հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի 2/3-ից: Մեծամասնության հետ տարակարծության դեպքում Հանձնաժողովի անդամները կարող են արտահայտել իրենց հատուկ կարծիքը, որը պարտադիր կարգով ընդգրկվում է նիստի արձանագրությունում:

7.4. Նիստի նախագահողը ստորագրում է Հանձնաժողովի որոշումը: Այնուհետև այն հաստատում է Ակադեմիայի նախագահը:

7.5. Տարեկան աշխատանքի արդյունքները ամփոփելու համար Հանձնաժողովը պատրաստում է ամենամյա հաշվետվություն, որը ներկայացվում է Ակադեմիայի նախագահին:

8. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

Հանձնաժողովի գործունեության նյութատեխնիկական և իրավական գործունեությունն իրականացվում է Ակադեմիայի միջոցների հաշվին:

9. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Սույն Կանոնակարգը, ինչպես նաև դրա փոփոխություններն ու լրացումները հաստատում է Ակադեմիայի նախագահը:

Սույն Կանոնակարգի վերանայումը կատարվում է ոչ ուշ, քան երեք տարին մեկ: